# <<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N <<ԼՄՀՆԴ-ՄԱ-ՏՆՏ-18/07>>

ք. Վանաձոր

«05» մայիսի 2018թ.

Գ.Ս.Քալանթարյանը ի դեմս <<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Արծագանք>> ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Վ.Ավագյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված տնտեսական ապրանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 675 950 /վեց հարյուր յոթանասունհինգ հազար ինն հարյուր հիսուն/ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.1 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մպտակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[1]:

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար

---

ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ
<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ
ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ-ղ
Հ/Հ 1570015001210100
ՀՎՀՀ 06902087

Տնօրեն՝ Գ.Ս.Քալանթարյան

_______________________

ՄԱՏԱԿԱՐԱՐ
<<Արձագանք>>ՍՊԸ
ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 81
<<Յունիբանկ>> ՓԲԸ, Վանաձոր մ-ղ
Հ/Հ 24101101216800
ՀՎՀՀ 06915527

Տնօրեն՝ Վ.Ավագյան

_______________________

*Հավելված N 1*
*2018թ.-ի մայիսի 5-ին կնքված*
*<<ԼՄՀՆԴ-ՄԱ-ՏՆՏ-18-07>> ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման ենթակա առավելագույն քանակը |
| 1 | 39831243 | Լվացքի փոշի ավտոմատ | Սպիտակ կամ բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի, փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %, ԳՕՍՏ 25644-96: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված | կգ | 1050 | 31500 | 30 | 30 |
| 2 | 39831242 | Լվացքի փոշի ձեռքով լվանալու համար | Սպիտակ կամ բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի, փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %, ԳՕՍՏ 25644-96: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն | կգ | 1400 | 6300 | 4,5 | 4,5 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 33761100 | Զուգարանի թուղթ, ռուլոնով | Երկշերտ կամ եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարա-հի-գի-ենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի": | հատ | 160 | 48000 | 300 | 300 |
| 4 | 39831240 | Սպիտակեցնող հեղուկ լվացքի /ժավելի սպիրտ/ | Սպիտակեցնող և ախտահանիչ հատկություններով հեղուկ ,,Նաիրիտ,, | լիտր | 130 | 650 | 5 | 5 |
| 5 | 39831245 | Ձեռքի օճառ հեղուկ | Մակերևութաակտիվ նյութերից և տարբեր կենսաբանական ակտիվ նյութերի լուծամզվածքներից պատրաստված օճառ, հոտավետ, ջրածնային իոնների խտությունը՝ 7-10 pH, ջրում չլուծվող խառնուկների պարունակությունը ոչ ավել՝ 15%-ից, չօճառացվող օրգանական նյութերի և ճարպերի պարունակությունը՝ ոչ ավել 0,5%-ից, փրփրագոյացնող հատկությունը՝ ոչ պակաս 300 սմ3-ից, եվրոպական արտադրության, Bulvinws կամ համարժեք, անվտանգությունը ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված ,Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգիե 4-5լ տարրայով | կգ | 1200 | 33720 | 28,1 | 28,1 |
| 6 | 39831241 | Ձեռքի օճառ , 70գր | Ձեռքի օճառ 100գ-ոց չորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ ,Չեզոքե և ,Էքստրաե տեսակների համար 78 գ, ,Մանկականե և ,Սովորականե տեսակների համար 74 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ ,Չեզոքե տեսակի համար բացակայում է, ,Էքստրաե տեսակի համար՝ 0,2 %, ,Մանկականե տեսակի համար՝ 0,15 %, ,Սովորականե տեսակի համար՝ 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) ՙC, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված ,N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ սանիտարական | հատ | 150 | 36000 | 240 | 240 |
| 7 | 39831241 | Օճառ ոչիլի | օճառ 100գ-ոց չորսուների , կտորների կամ այլ ձևերով, հակաճիլային | հատ | 250 | 750 | 3 | 3 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 39831210 | Հեղուկ աման լվանալու, 0,5լ | Մածուկանման զանգված, օգտագործված հոտավորիչի հոտով, գույնը՝ ըստ լվացող միջոցների գույնի որոշման սանդղակի, խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 50%, պոլիմերային կամ ապակե տարաներում՝ 200գ-ոց զանգվածով: Անվտանգությունը ըստ ՀՀ կառավարության 16.12.2004թ.-ի հաստատված 1795-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգին | հատ | 450 | 18000 | 40 | 40 |
| 9 | 39831280 | Հեղուկ պատուհան մաքրելու համար, 0,5 | Թափանցիկ, սաղափաձայլ հեղուկ,,,Barf,, կամ համարժեք, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված ,N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ | լիտր | 1000 | 2500 | 2,5 | 2,5 |
| 10 | 39831250 | Լեղակ լվացքի /ավտ.մեք./ | Հեղուկ լվացքի համար | լիտր | 440 | 220 | 0,5 | 0,5 |
| 11 | 39831247 | Սպիտակեցնող հեղուկ լվացքի | Սպիտակեցնող և ախտահանիչ հատկություններով հեղուկ ավտոմատ մեքենայի լվացքի համար | հատ | 400 | 2000 | 5 | 5 |
| 12 | 39831210 | Սպասք մաքրող փոշի | Սպիտակ կամ բաց դեղնավուն կամ գունավորված հատիկավոր փոշի: Անվտանգությունը ըստ ՀՀ կառավարության 16.12.2004թ.-ի հաստատված 1795-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգին համապատասխան | հատ | 300 | 14400 | 48 | 48 |
| 13 | 39831272 | Միլ կաթսա մաքրելու համար | Մետաղալար կաթսաներ փայլեցնելու համար | հատ | 160 | 6400 | 40 | 40 |
| 14 | 39831272 | Սպունգ, աման լվանալու | Ուղղանկյունաձև, երկարությունը 120 մմ, լայնությունը 70մմ, հաստությունը 25մմ, մի կողմից երեսապատված արհեստական կտորով | հատ | 100 | 4000 | 40 | 40 |
| 15 | 39831271 | Սպունգ լոգանքի | Սանիտարահիգիենիկ նշանակության, սինթետիկ, խորանարդաձև կամ ուղղանկյուն (15x20) սմ չափի, հաստությունը՝ 3 սմ կամ այլ չափերի | հատ | 300 | 3000 | 10 | 10 |
| 16 | 39811300 | Հոտազերծիչ /աէրազոլ/ | Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակումային բալոնիկով, թարմ ծաղկային բուրմունքով | հատ | 500 | 15000 | 30 | 30 |
| 17 | 39831247 | Հեղուկ սանհանգույց մաքրելու համար | <<Կրոտ>> կամ համարժեք, 1լ տարողությամբ /տարան կայրոնե/ | լիտր | 1000 | 1000 | 1 | 1 |
| 18 | 44831100 | Մաստիկա | Չցնդող նյութերի զանգվածային մասը՝ ոչ պակաս 30 %-ից, կաթիլանկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 75oC-ից, փայլեցնող հատկությունը ըստ փայլաչափ սանդղակի՝ ոչ պակաս 12-ից, թաղանթի ջրակայունությունը՝ ոչ պակաս 1 բալից, թաղանթի փոշեկուտակման հատկությունը՝ ոչ ավելի 0,8 մգ/սմ2-ից, չափածրարված 400 գ-ից մինչև 2500 գ տուփերով | կգ | 1250 | 1000 | 0,8 | 0,8 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | 33141118 | Անձեռոցիկ | Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ (200 x 200) մմ չափերի, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, տուփերով, գունավոր, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական | հատ | 150 | 27000 | 180 | 180 |
| 20 | 33141118 | Անձեռոցիկ, հատ | Անձեռոցիկ սեղանի՝ եռաշերտ (200 x 200) մմ չափերի, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, տուփերով, գունավոր, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական | հատ | 350 | 1750 | 5 | 5 |
| 21 | 18141100 | Ձեռնոց ռետինե տնտ. զույգ | Ձեռնոցներ ռետինե I տիպի՝ N 2, N 3 (XL չափի), հաստությունը՝ 0,6-0,9 մմ, II տիպի՝ N 9, N 10 (XL չափի), հաստությունը՝ 0,2-0,4 մմ, երկարությունը 300 մմ ոչ պակաս, ըստ ԳՕՍՏ 20010-93 կամ համարժեք: | զույգ | 250 | 3750 | 15 | 15 |
| 22 | 39224400 | Լուցկի | Սովորական | հատ | 10 | 2000 | 200 | 200 |
| 23 | 33711470 | Փրփուր սափրվելու համար | Փրփուր սափրվելու համար ,,ARCO,, կամ համարժեք | հատ | 350 | 4200 | 12 | 12 |
| 24 | 33711460 | Ածելիի սայրեր սափրվելու համար,10 | Սափրող ածելիների սայրեր ,,Ռապիռա,, կամ համարժեք | հատ | 2000 | 24000 | 12 | 12 |
| 25 | 33711460 | Ածելի սափրվելու համար | Սափրող ածելիներ սովորական | հատ | 150 | 1800 | 12 | 12 |
| 26 | 39835000 | Ջող հատակ մաքրելու փայտե | 1,5-2 մ երկարության փայտե, լաքապատված: | հատ | 850 | 4250 | 5 | 5 |
| 27 | 39831283 | Լաթ հատակ մաքրելու համար | Լաթեր տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից | հատ | 850 | 4250 | 5 | 5 |
| 28 | 39831240 | Լվացող միջոց գորգերի համար | Թափանցիկ, սաղաֆափայլ, ..Золушка,, կամ համարժեք: | հատ | 650 | 1300 | 2 | 2 |
| 29 | 39831282 | Կտոր սեղանը մաքրելու համար | Լաթեր տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից, 20*20սմ: | հատ | 150 | 3000 | 20 | 20 |
| 30 | 39221420 | Խոզանակ հատակ մաքրելու | Մազափնջերը մակերեսային լայնության վրա,երեք շարքից: Մազափնջերը կոշտ, օրգանական թելերից: Մազափնջերը հենքի միջնամասում, մետաղյա թելերով հանգուցազործված:1,5-2 մ երկարության փայտե, բռնակով, | հատ | 1400 | 2800 | 2 | 2 |
| 31 | 39221420 | Խոզանակ գորգ մաքրելու | Մազափնջերը մակերեսային լայնության վրա, վեց շարքից: Մազափնջերը կոշտ, օրգանական թելերից: Մազափնջերը հենքի միջնամասում, մետաղյա թելերով հանգուցազործվածՊլաստմասե բռնակով: | հատ | 500 | 1500 | 3 | 3 |

*06002087*

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 32 | 39224332 | Դույլ ցինկապատ | Դույլ մետաղյա, XIII, XII, OH խմբերի նրբաթերթ շիկացինկապատ պողպատից, 0,35-0,55 մմ պողպատի անվանական հաստությամբ, ԳՕՍՏ 20558-82, ԳՕՍՏ 24788-2001 կամ համարժեք | հատ | 1600 | 3200 | 2 | 2 |
| 33 | 19642100 | Սփռոց պոլիէթիլենային | Սովորական , նախատեսված սեղանների համար: | մետր | 1000 | 20000 | 20 | 20 |
| 34 | 19642100 | Վարագույր պոլիէթիլենային | Սովորական գունավոր, հարմարեցված կախելու համար: | հատ | 4000 | 8000 | 2 | 2 |
| 35 | 19642100 | Պոլիէթիլեն | Սովորական, թափանցիկ,երկշերտ: | մետր | 250 | 2500 | 10 | 10 |
| 36 | 19641000 | Պոլիէթիլենային պարկ, աղբի,100 | Սովորական, նախատեսված աղբի համար | հատ | 700 | 7000 | 10 | 10 |
| 37 | 19641000 | Պոլիէթիլենային պարկ, 100հատ | Սովորական | հատ | 1000 | 2000 | 2 | 2 |
| 38 | 31531210 | Էլ. լամպ 100Վտ, 220-230Վ | Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի, ԳՕՍՏ 2239-79 կամ համար-ժեք: Անվտանգությունը` ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ,Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի | հատ | 150 | 37500 | 250 | 250 |
| 39 | 31531220 | Էլ. լամպ 150Վտ, 220-230Վ | Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 150 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի, ԳՕՍՏ 2239-79 կամ համար-ժեք: Անվտանգությունը` ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ,Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի | հատ | 250 | 1250 | 5 | 5 |
| 40 | 31531300 | Տնտեսող լամպ, 40Վ | Խողովակաձև լյումինեսցենտային լամպ` ուղիղ, օղակաձև կամ U-ձև G-13 տիպի լամպակոթով, 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականության, համապատասխան երկարությամբ, ԳՕՍՏ 6825-91: Անվտանգությունը` ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ,Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջներին տեխնիկական կանոնակարգի և ԳՕՍՏ Ռ ՄԷԿ | հատ | 1000 | 6000 | 6 | 6 |
| 41 | 31531300 | Տնտեսող լամպ, 75Վ | Խողովակաձև լյումինեսցենտային լամպ` ուղիղ, օղակաձև կամ U-ձև G-13 տիպի լամպակոթով, 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականության, համապատասխան երկարությամբ, ԳՕՍՏ 6825-91: Անվտանգությունը` ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ,Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջներիե տեխնիկական կանոնակարգի և ԳՕՍՏ Ռ ՄԷԿ | հատ | 2400 | 7200 | 3 | 3 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 42 | 31531690 | Ցերեկային լամպի ստարտեր | Նախատեսված ցերեկային լյումինեսցենտային լամպի համար | հատ | 800 | 3200 | 4 | 4 |
| 43 | 31532000 | Ցերեկային լամպի միկրոխեձա | Նախատեսված ցերեկային լյումինեսցենտային լամպի համար | հատ | 850 | 1700 | 2 | 2 |
| 44 | 39221420 | Խոզանակ զուգարան մաքրելու | Նախատեսված զուգարան մաքրելու համար | հատ | 2000 | 4000 | 2 | 2 |
| 45 | 39221420 | Խոզանակ կահույք մաքրելու | Նախատեսված կահույքի փոշիները մաքրելու համար | հատ | 1600 | 4800 | 3 | 3 |
| 46 | 44521120 | Փական դռան ներդրովի, 90*145 | Դռան ներդրովի կողպեք բանալիներով,ԳՕՍՏ 5089-2003 կամ համարժեք, արտասահմանյան արտադրության | հատ | 10000 | 50000 | 5 | 5 |
| 47 | 44521170 | Փական դռան կախովի | Դռան կախովի կողպեք, նիկելապատ, երկու բանալիով, ըստ տեխնիկական փաստաթղթի | հատ | 2800 | 8400 | 3 | 3 |
| 48 | 44521210 | Դռան փականի միջուկ | Սովորական արտասահմանյան արտադրության | հատ | 2800 | 19600 | 7 | 7 |
| 49 | 44192600 | Մեխ | Տարբեր չափերի՝ (0,8-8,0) մմ ձողիտրամագծովև (5-250) մմ երկարությամբ, ԳՕՍՏ 283-75, տեղական արտադրության | կգ | 900 | 1800 | 2 | 2 |
| 50 | 44531110 | Փայտի պտուտակներ | Սովորական, տարբեր չափերի | կգ | 1600 | 2400 | 1,5 | 1,5 |
| 51 | 24911200 | Սոսինձ էմուլսիա | Սոսինձ պոլիվինիլացետատային դիսպերսիայի հիմքով, թղթի, ստվարաթղթի, լինոլեումի, երեսպատման սալիկների, փայտե իրերի սոսնձման համար՝ 900գր-ոց, չափածրարված պոլիմերային տարաների մեջ/ կամ այլ | կգ | 1100 | 3300 | 3 | 3 |
| 52 | 24911400 | Սոսինձ «Սուպեր 702» | Նախատեսված փայտե, պլաստամասյե և ապակյա իրերը սոսնձելու համար: | տուբ | 500 | 1000 | 2 | 2 |
| 53 | 24911400 | Սիլիկոնե քսուք | Նախատեսված տարբեր վերանորոգման հետ կապված աշխատանքների | հատ | 1200 | 2400 | 2 | 2 |
| 54 | 31651400 | Մեկուսիչ ժապավեն կտորե | Հոսանքի մեկուսացման համար տարբեր երկարության և լայնության գլանափաթեթներով պոլիմերային ժապավեն, կապույտ կամ սև գույնի | հատ | 300 | 900 | 3 | 3 |
| 55 | 31651400 | Մեկուսիչ ժապավեն պոլիէթիլենային | Գլանափաթեթված ժապավեն 48 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ, ԳՕՍՏ 20477-86 | հատ | 250 | 1250 | 5 | 5 |
| 56 | 31651300 | Սկոչ թղթե, 5*10սմ | Գլանափաթեթված ժապավեն 48 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ, ԳՕՍՏ 20477-87 | հատ | 600 | 9000 | 15 | 15 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 57 | 31684400 | Էլ. վարդակ, անջատիչ | Վարդակ 1 կամ 2 տեղանոց պլաստմասսայե UL-94V, 1 port RJ11 բնիկով, 1 տեղանոց, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը՝ R 1000 MOм, աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 30 ՙC-ից մինչև +80 ՙC, սպիտակ կամ կաթնագույն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ,Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական | հատ | 700 | 3500 | 5 | 5 |
| 58 | 31686000 | Խրոց | 220Վ լարման, 16 Ա հզորության, երկու միացման և հողանցման լատունե կոնտակտներով, արտաքին դետալները կարբոնապլաստմասե: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" | հատ | 700 | 1400 | 2 | 2 |
| 59 | 31683400 | Եռաբախշիչ | Վարդակ 4 տեղանոց պլաստմասսայե UL-94V | հատ | 950 | 1900 | 2 | 2 |
| 60 | 44311100 | Մետաղալար պղնձե բազմերակ,2,5մմ | Բարձր որակի, նախատեսված մոնտաժային աշխատանքների համար:: | մետր | 200 | 3000 | 15 | 15 |
| 61 | 31440000 | Մարտկոց ջրատաքացուցիչի | Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար,1.5վ, AAA ալկալիական,առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով: | հատ | 250 | 500 | 2 | 2 |
| 62 | 31441000 | Մարտկոց ժամացույցի | Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար,1.5վ, AA ալկալիական,առնվազն մեկ տարվա պիտանելիության | հատ | 120 | 2400 | 20 | 20 |
| 63 | 31681410 | Միաֆազ ավտոմատ, 5-10Ա | Նախատեսված (220-250) Վ հոսանքի լարման , մինչև 6 Ա հզորության | հատ | 1100 | 1100 | 1 | 1 |
| 64 | 44411300 | Լվացարանի սիֆոն | Պլաստմասե, համապատասխան լվացարանների չափերի: | հատ | 2100 | 6300 | 3 | 3 |
| 65 | 42131470 | Ջրի ծորակի պահեստամասեր | Լավ որակի, նախատեսված չափերի: | հատ | 1300 | 5200 | 4 | 4 |
| 66 | 44411110 | Ծորակ ջրի | Կիսաշրջանաձև ծորակ, 1 փականով, նիկելապատված: Իտալական արտադրության կամ համարժեք | հատ | 3500 | 10500 | 3 | 3 |
| 67 | 34911150 | Բաղնիքի ցնցուղ | Սովորական, արտասահմանյան արտադրության, նիկելապատ | | 4500 | 4500 | 1 | 1 |
| 68 | 34913000 | Զուգարանակոնքի պահեստամասերի հավաքածու | Լավ որակի, նախատեսված չափերի: | հատ | 3500 | 14000 | 4 | 4 |
| 69 | 44511260 | Դզկաթուղթ | Բարձր որակի, տարբեր չափերի | ք.մ. | 1100 | 2200 | 2 | 2 |
| 70 | 44192000 | Անկյունակ պլաստմասե | Բարձր որակի, տարբեր չափերի | հատ | 450 | 4500 | 10 | 10 |
| 71 | 44111411 | Ներկ էմալե ,,Նացիոնալ,, | Ներկ ջրաէմուլսիոն«Նացիոնալ» կամ համարժեք | կգ | 2400 | 36000 | 15 | 15 |
| 72 | 44921500 | Ծեփամածիկ | Բարձր որակի, համասեռ | կգ | 200 | 8000 | 40 | 40 |
| 73 | 24910000 | Սոսինձ ,,Жидкий гвоздь,, | Բարձր որակի | հատ | 1200 | 1200 | 1 | 1 |
| 74 | 39221460 | Վրձին ներկարարական | Նախատեսված վերանորոգման աշատանքների համար տարբեր չափերի: | հատ | 750 | 3000 | 4 | 4 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 75 | 44511220 | Վալիկ ներկարարական | Նախատեսված վերանորոգման աշատանքների համար տարբեր չափերի: | հատ | 1800 | 1800 | 1 | 1 |
| 76 | 44110000 | Գիպսոնիտ | Լավ որակի, միասեռ, առանձ խառնուրդների: | կգ | 85 | 3400 | 40 | 40 |
| 77 | 42131000 | Կափույր /вентиль/ ջրի 1/2 | Բարձր որակի: | հատ | 1400 | 2800 | 2 | 2 |
| 78 | 42131000 | Կափույր /вентиль/ ջրի 3/4 | Բարձր որակի: | հատ | 2600 | 5200 | 2 | 2 |
| 79 | 44163100 | Խողովակ ռետինե ճկուն | Բարձր որակի, ամուր ռետինից: | մետր | 1800 | 18000 | 10 | 10 |
| 80 | 44511340 | Գայլիկոն սայրեր φ6 | Նախատեսված գնվող գայլիկոնիրի համար: | հատ | 450 | 450 | 1 | 1 |
| 81 | 44511341 | Գայլիկոն սայրեր φ8 | Նախատեսված գնվող գայլիկոնիրի համար: | հատ | 550 | 550 | 1 | 1 |
| 82 | 44511342 | Գայլիկոն սայրեր φ10 | Նախատեսված գնվող գայլիկոնիրի համար: | հատ | 650 | 650 | 1 | 1 |
| 83 | 44831500 | Լուծիչ 0,5լ | Սովարական, նախատեսված շինարարական աշխատանքների համար | հատ | 700 | 4200 | 6 | 6 |
| 84 | 44111414 | Ներկ լատեքսային | Սովարական, նախատեսված շինարարական աշխատանքների համար | լիտր | 1000 | 15000 | 15 | 15 |
| **Ընդամենը՝** | | | | | | **675790** | | |

1. Ապրանքը չպետք է լինի օգտագործված: Մատակարարը իր ուժերով և միջոցներով պետք է ապահովի ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը:
2. Մատակարարումը իրականացվում է ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող քանակների և մատակարարման ժամկետների, նկատի ունենալով, որ մատակարարման առաջին պատվերի տրամադրման և մատակարարման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող պակաս լինել 30 աշխատանքային օրից, եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարումն իրականացնել ավելի կարճ ժամկետում: Ընդ որում հաջորդող պատվերների մատակարարումներն իրականացվում են պատվերի ներկայացմանը հաջորդող 2 օրվա ընթացքում: Պայմանագիրը գործելու է մինչև 2018թ. դեկտեմբերի 20-ը: Մատակարարման վայրը՝ ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57:
3. Ապրանքի վրա պարտադիր պետք է առկա լինի ֆիմայի նշանը:

ԳՆՈՐԴ
«ԼՄՅՆԴ» ՊՓԲԸ
ք. Վանաձոր, Գ.Նժդեհի 57
«Ամերիաբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ-ղ
Հ/Հ 1570015001210100
ՀՎՀՀ 06902087
Տնօրեն՝ Գ.Ս.Քալանթարյան

Կ.Տ

ՎԱճԱՌՈՂ
«Արձագանք» ՍՊԸ
ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 81
«Յունիբանկ» ՓԲԸ, Վանաձոր մղ
Հ/Հ 24101101216800
ՀՎՀՀ 06915527
Տնօրեն՝ Կ.Ավագյան

Կ.Տ

Հավելված 2
<<ԼՄՀՆԴ-ՄԱ-ՏՆՏ-18-07>>
2018թ. մայիսի 5-ին կնքված պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | |
| | | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 39831243 | Լվացքի փոշի ավտոմատ | 6300 | 9450 | 12600 | 15750 | 18900 | 22050 | 25200 | 31500 | 31500 |
| 2 | 39831242 | Լվացքի փոշի ձեռքով լվանալու համար | 1400 | 1400 | 2800 | 2800 | 4900 | 4900 | 6300 | 6300 | 6300 |
| 3 | 33761100 | Զուգարանի թուղթ, ռուլոնով | 9600 | 14400 | 19200 | 24000 | 28800 | 33600 | 38400 | 48000 | 48000 |
| 4 | 39831240 | Սպիտակեցնող հեղուկ լվացքի /ժավելի սպիրտ/ | | 650 | 650 | 650 | 650 | 650 | 650 | 650 | 650 |
| 5 | 39831245 | Ձեռքի օճառ հեղուկ | 8520 | 12120 | 15720 | 19320 | 22920 | 26520 | 30120 | 33720 | 33720 |
| 6 | 39831241 | Ձեռքի օճառ , 70գր | 4500 | 9000 | 13500 | 18000 | 22500 | 27000 | 31500 | 36000 | 36000 |
| 7 | 39831241 | Օճառ ոչիլի | | 250 | 250 | 500 | 500 | 750 | 750 | 750 | 750 |
| 8 | 39831210 | Հեղուկ աման լվանալու, 0,5լ | 2250 | 4500 | 6750 | 9000 | 11250 | 13500 | 15750 | 18000 | 18000 |
| 9 | 39831280 | Հեղուկ պատուհան մաքրելու համար, 0,5 | | 1500 | 1500 | 1500 | 2500 | 2500 | 2500 | 2500 | 2500 |
| 10 | 39831250 | Լեղակ լվացքի /ավտ.մեք./ | 220 | 220 | 220 | 220 | 220 | 220 | 220 | 220 | 220 |
| 11 | 39831247 | Սպիտակեցնող հեղուկ լվացքի | | 400 | 400 | 800 | 1200 | 1200 | 2000 | 2000 | 2000 |
| 12 | 39831210 | Սպասք մաքրող փոշի | 1800 | 3600 | 5400 | 7200 | 9000 | 10800 | 12600 | 14400 | 14400 |
| 13 | 39831272 | Միլ կաքսա մաքրելու համար | 800 | 1600 | 2400 | 3200 | 4000 | 4800 | 5600 | 6400 | 6400 |
| 14 | 39831272 | Սպունգ, աման լվանալու | 500 | 1000 | 1500 | 2000 | 2500 | 3000 | 3500 | 4000 | 4000 |
| 15 | 39831271 | Սպունգ լոգանքի | 900 | 1200 | 1500 | 1800 | 2100 | 2400 | 3000 | 3000 | 3000 |
| 16 | 39811300 | Հոտազերծիչ /աէրազոլ/ | 1000 | 3000 | 5000 | 7000 | 9000 | 11000 | 13000 | 15000 | 15000 |
| 17 | 39831247 | Հեղուկ սանհանգույց մաքրելու համար | | | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | 44831100 | Մաստիկա | | | | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 19 | 33141118 | Անձեռոցիկ | 4500 | 7500 | 10500 | 13500 | 16500 | 19500 | 24000 | 27000 | 27000 |
| 20 | 33141118 | Անձեռոցիկ, հատ | | 700 | 700 | 1400 | 1400 | 1750 | 1750 | 1750 | 1750 |
| 21 | 18141100 | Ձեռնոց ռետինե տնտ. զույգ | | 1250 | 1250 | 2500 | 2500 | 3000 | 3750 | 3750 | 3750 |
| 22 | 39224400 | Լուցկի | | 1000 | 1000 | 1000 | 1000 | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 23 | 33711470 | Փրփուր սափրվելու համար | | 1050 | 1050 | 2100 | 2100 | 4200 | 4200 | 4200 | 4200 |
| 24 | 33711460 | Ածելիի սայրեր  սափրվելու համար,10 | 2000 | 4000 | 6000 | 10000 | 14000 | 18000 | 20000 | 24000 | 24000 |
| 25 | 33711460 | Ածելի  սափրվելու համար | 900 | 900 | 900 | 900 | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 |
| 26 | 39835000 | Զող հատակ մաքրելու փայտե | 850 | 850 | 1700 | 1700 | 2550 | 2550 | 4250 | 4250 | 4250 |
| 27 | 39831283 | Լաթ հատակ մաքրելու համար | 850 | 850 | 1700 | 1700 | 2550 | 2550 | 4250 | 4250 | 4250 |
| 28 | 39831240 | Լվացող միջոց գորգերի համար | | | | 1300 | 1300 | 1300 | 1300 | 1300 | 1300 |
| 29 | 39831282 | Կտոր սեղանը մաքրելու  համար | 1500 | 1500 | 1500 | 1500 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 30 | 39221420 | Խոզանակ հատակ մաքրելու | 1400 | 1400 | 1400 | 1400 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 |
| 31 | 39221420 | Խոզանակ գորգ մաքրելու | | | 1500 | 1500 | 1500 | 1500 | 1500 | 1500 | 1500 |
| 32 | 39224332 | Դույլ ցինկապատ | | 1600 | 1600 | 1600 | 1600 | 3200 | 3200 | 3200 | 3200 |
| 33 | 19642100 | Սփռոց պոլիէթիլենային | 5000 | 5000 | 10000 | 10000 | 15000 | 15000 | 20000 | 20000 | 20000 |
| 34 | 19642100 | Վարագույր պոլիէթիլենային | | | 4000 | 4000 | 4000 | 8000 | 8000 | 8000 | 8000 |
| 35 | 19642100 | Պոլիէթիլեն | | 2500 | 2500 | 2500 | 2500 | 2500 | 2500 | 2500 | 2500 |
| 36 | 19641000 | Պոլիէթիլենային պարկ, աղբի,100 | 1400 | 1400 | 2800 | 2800 | 4200 | 4200 | 7000 | 7000 | 7000 |
| 37 | 19641000 | Պոլիէթիլենային պարկ, 100հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 38 | 31531210 | Էլ. լամպ 100Վտ, 220-230Վ | 3250 | 7750 | 12250 | 16750 | 21250 | 25750 | 34750 | 37500 | 37500 |
| 39 | 31531220 | Էլ. լամպ 150Վտ, 220-230Վ | | 750 | 750 | 750 | 1250 | 1250 | 1250 | 1250 | 1250 |
| 40 | 31531300 | Տնտեսող լամպ, 40Վ | 1000 | 1000 | 2000 | 2000 | 4000 | 4000 | 6000 | 6000 | 6000 |
| 41 | 31531300 | Տնտեսող լամպ, 75Վ | 2400 | 2400 | 4800 | 4800 | 4800 | 7200 | 7200 | 7200 | 7200 |
| 42 | 31531690 | Ցերեկային լամպի ստարտեր | | 1600 | 1600 | 1600 | 3200 | 3200 | 3200 | 3200 | 3200 |
| 43 | 31532000 | Ցերեկային լամպի միկրոսխեմա | | | 1700 | 1700 | 1700 | 1700 | 1700 | 1700 | 1700 |
| 44 | 39221420 | Խոզանակ զուգարան մաքրելու | | | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 45 | 39221420 | Խոզանակ կահույք մաքրելու | | 2400 | 2400 | 2400 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 |
| 46 | 44521120 | Փական դռան ներդրովի, 90*145 | 10000 | 10000 | 20000 | 20000 | 30000 | 40000 | 40000 | 50000 | 50000 |
| 47 | 44521170 | Փական դռան կախովի | | 2800 | 2800 | 5600 | 5600 | 8400 | 8400 | 8400 | 8400 |
| 48 | 44521210 | Դռան փականի միջուկ | | 2800 | 5600 | 8400 | 11200 | 14000 | 16800 | 19600 | 19600 |
| 49 | 44192600 | Մեխ | | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 |
| 50 | 44531110 | Փայտի պտուտակներ | | 1600 | 1600 | 1600 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 51 | 24911200 | Սոսինձ էմուլսիա | 1100 | 1100 | 1100 | 2200 | 2200 | 2200 | 3300 | 3300 | 3300 |
| 52 | 24911400 | Սոսինձ «Սուպեր 702» | | | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 53 | 24911400 | Սիլիկոնե քսուք | | 1200 | 1200 | 1200 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 54 | 31651400 | Մեկուսիչ ժապավեն կտորե | 300 | 300 | 600 | 600 | 600 | 900 | 900 | 900 | 900 |
| 55 | 31651400 | Մեկուսիչ ժապավեն պոլիէթիլենային | | 250 | 250 | 500 | 500 | 1000 | 1250 | 1250 | 1250 |
| 56 | 31651300 | Սկոչ թղթե, 5*10սմ | 600 | 1800 | 3000 | 4200 | 5400 | 6600 | 7800 | 9000 | 9000 |
| 57 | 31684400 | Էլ. վարդակ, անջատիչ | | 1400 | 1400 | 2800 | 2800 | 2800 | 3500 | 3500 | 3500 |
| 58 | 31686000 | Խրոց | | | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 |
| 59 | 31683400 | Եռաբախշիչ | | | | | 1900 | 1900 | 1900 | 1900 | 1900 |
| 60 | 44311100 | Մետաղալար պղնձե բազմերակ,2,5մմ | | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 61 | 31440000 | Մարտկոց ջրատաքացուցիչի | 500 | 500 | 500 | 500 | 500 | 500 | 500 | 500 | 500 |
| 62 | 31441000 | Մարտկոց ժամացույցի | 600 | 600 | 600 | 1200 | 1200 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 63 | 31681410 | Միաֆազ ավտոմատ, 5-10Ա | 1100 | 1100 | 1100 | 1100 | 1100 | 1100 | 1100 | 1100 | 1100 |
| 64 | 44411300 | Լվացարանի սիֆոն | | 2100 | 2100 | 4200 | 4200 | 6300 | 6300 | 6300 | 6300 |
| 65 | 42131470 | Ջրի ծորակի պահեստամասեր | 1300 | 1300 | 2600 | 2600 | 3900 | 3900 | 5200 | 5200 | 5200 |
| 66 | 44411110 | Ծորակ ջրի | 3500 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 10500 | 10500 | 10500 | 10500 |
| 67 | 34911150 | Բաղնիքի ցնցուղ | | | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 |
| 68 | 34913000 | Զուգարանակոնքի պահեստամասերի հավաքածու | | 7000 | 7000 | 7000 | 7000 | 14000 | 14000 | 14000 | 14000 |
| 69 | 44511260 | Դըլկաթուրք | | 1100 | 1100 | 1100 | 1100 | 2200 | 2200 | 2200 | 2200 |
| 70 | 44192000 | Անկյունակ պլաստմասե | | | | | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 |
| 71 | 44111411 | Ներկ էմալե ,,Նացիոնալ,, | | | 19200 | 19200 | 19200 | 36000 | 36000 | 36000 | 36000 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 72 | 44921500 | Ծեփամածիկ | 4000 | 4000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 |
| 73 | 24910000 | Սոսինձ ,,Жидкий гвоздь,, | | | | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 74 | 39221460 | Վրձին ներկարարական | | | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 75 | 44511220 | Վալիկ ներկարարական | | | | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 |
| 76 | 44110000 | Գիպսոնիտ | | | 3400 | 3400 | 3400 | 3400 | 3400 | 3400 | 3400 |
| 77 | 42131000 | Կափույր /вентиль/ ջրի 1/2 | 1400 | 1400 | 1400 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 |
| 78 | 42131000 | Կափույր /вентиль/ ջրի 3/4 | 2600 | 2600 | 2600 | 2600 | 5200 | 5200 | 5200 | 5200 | 5200 |
| 79 | 44163100 | Խողովակ ռետինե ճկուն | | | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 |
| 80 | 44511340 | Գայլիկոն սայրեր φ6 | | | 450 | 450 | 450 | 450 | 450 | 450 | 450 |
| 81 | 44511341 | Գայլիկոն սայրեր φ8 | | | 550 | 550 | 550 | 550 | 550 | 550 | 550 |
| 82 | 44511342 | Գայլիկոն սայրեր φ10 | | | 650 | 650 | 650 | 650 | 650 | 650 | 650 |
| 83 | 44831500 | Լուծիչ 0,5լ | | | 4200 | 4200 | 4200 | 4200 | 4200 | 4200 | 4200 |
| 84 | 44111414 | Ներկ լատեքսային | 2700 | 5400 | 5400 | 5400 | 10800 | 10800 | 10800 | 10800 | 15000 |
| | | | **93540** | **174840** | **309090** | **366890** | **455690** | **553390** | **616390** | **671490** | **675690** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**Ընդամենը՝ Վեց հարյուր յոթանասունհինգ հազար վեց իննսուն դրամ:**

ԳՆՈՐԴ

«ԼՄՀՆԴ» ՊՓԲԸ
ք. Վանաձոր, Գ.Նժդեհի 57
«Ամերիաբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ-ղ
Հ/Հ 1570015001210100
ՀՎՀՀ 06902087
Տնօրեն՝ Գ.Ս.Քալանթարյան

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Արծազանք» ՍՊԸ
ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 81
«Յունիբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ-ղ
Հ/Հ 24101101216800
ՀՎՀՀ 06915527
Տնօրեն՝ Վ.Ախազյան

Կ.Տ